ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ..2....

ՀՀ Արագածոտնի մարզպետարանում 29.04.2011թ. տեղի ունեցած մարզխորհրդի նիստի՝

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Մ. Առաքելյան- ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Ա. Արսենյան- ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Հ. Գևորգյան- ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
Հ. Օհանյան- ՀՀ ՏԿՆ աշխատակազմի ներկայացուցիչ
Ա. Թորոսյան- ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարկային տեսչության Արագածոտնի մարզային կենտրոնի պետ
ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարները

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Գարնան գյուղատնտեսական աշխատանքների, ոռոգման ջրի տրման, առաջին վերարտադրության <Էլիտա> տեսակի գարու սերմացուի բաշխման, պայմանագրերի կնքման գործընթացի կազմակերպման մասին/զեկ՝ գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. Ազատյան/:

2. Սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի մասին:/զեկ.՝ մարզպետի տեղակալ Մ. Առաքելյան/:

3. Համայնքների բյուջեների կատարման, աշխատավարձների նախկին պարտքերի մարման գործընթացի մասին/զեկ.՝ Ֆ և ՍՏԶ վարչության պետ Ն. Գալստյան/:

4. 2010 թվականի աշնանային զորակոչի արդյունքների, 2011 թվականի գարնանային զորակոչի խնդիրների պարզաբանման , զինվորական հաշվառումից և զորակոչից խուսափած անձանց որոնողական աշխատանքների վիճակի մասին՝ ըստ համայնքների և զինկոմիսարիատների ՀՀ կառավարության 27.05. 2010թ. թիվ 657 որոշման պահանջների պարզաբանում /զեկ.՝ Աշտարակի զինվորական կոմիսար Է. Մկրտչյան/:

5. Մարզում սանիտարական միամսյակ հայտարարելու և դրա հետ կապված կազմակերպչական հարցերի պարզաբանում / զեկ.՝ քաղաքաշինության վարչության պետ Ա. Դավայան /:

6. 3-6 տարեկան երեխաների բնակչության պետական ռեգիստրում հաշվառման գործընթացի մասին /զեկ.՝ ԿՄՍ վարչության պետ Պ. Համբարձումյան/:

7. Այլ հարցեր և հայտարարություններ:

Գարնան գյուղատնտեսական աշխատանքների, ոռոգման ջրի տրման, առաջին վերարտադրության <Էլիտա> տեսակի գարու սերմացուի բաշխման, պայմանագրերի կնքման գործընթացի կազմակերպման մասին զեկուցեց գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ պ-րն Յու. Ազատյանը:

Հայջրմուղի հետ պայմանագիր էր կնքվել մինչև մայիսի 1-ը համայնքներին ոռոգման առաջին ջուրն անվճար տալու վերաբերյալ: Բայց ջրվել է նախատեսվածից շատ ավելի քիչ տարածք:

Ստացվել է գարու 320 տոննա սերմացու, որից 200 տոննան առաջին վերարտադրության գարու սերմնացու է/1 կգ.- 70դ./, իսկ 120 տոննան՝ <էլիտա> տեսակի/1 կգ.-100դ./: Համայնքապետերը կարող են գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունից ստանալ փոխառության պայմանագրերը:

Գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունը կարող է համայնքապետերին տրամադրել նաև եգիպտացորենի սերմացու /5 տոննա/ և ցինկ-ֆոսֆիդ պարարտանյութ՝ կրծողների դեմ պայքարելու համար, ինչպես նաև վրացական արտադրության պարարտանյութ/1կգ.-6700դ./:

Ցանկացողները պետք է մեկ շաբաթվա ընթացքում հայտ ներկայացնեն գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն:

Սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի մասին զեկուցեց մարզպետի տեղակալ Մ. Առաքելյանը:

2010թ. 1-ին կիսամյակի հետ համեմատած 2-րդ կիսամյակում սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշը համայնքներում ցածր է:Մարզի 114 համայնքներից 68-ում ցուցանիշը ցածր է, 24 համայնքներում ընդհանրապես գանձում չի արվել:ՀՀ Արագածոտնի մարզպետի կարգադրությամբ ստեղծված աշխատանքային խումբը ուումնասիրել է գործընթացը: Կատարված աշխատանքների շնորհիվ բարձրացել է ցուցանիշը, կան դրական արդյունքներ: Հնարավոր է սեփական եկամուտների գանձման ցուցանիշի բարձրացում 2011թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին :

Պ-րն Մ. Առաքելյանը հանդես եկավ նաև հայտարարություններով ՝

- Հակահամաճարակային տեսչության Արագածոտնի մարզային կենտրոնից ստացվել են համայնքների խմելաջրի որակի ուսումնասիրության արդյունքները, համաձայն որի կան խմելու ջրի որակի նորմայի շեղումներ:

- Աշտարակ քաղաքի հիմնական փողոցներում կան կանաչապատման խնդիրներ: Այդ ուղղությամբ աշխատանքները պատշաճ մակարդակով չեն կատարվում:

Համայնքների բյուջեների կատարման, աշխատավարձների նախկին պարտքերի մարման գործընթացի մասին զեկուցեց Ֆ և ՍՏԶ վարչության պետ պ-րն Ն. Գալստյանը:

Սեփական եկամուտների գանձման գործընթացը կատարվում է ցածր մակարդակով:

Աշխատավարձների նախկին պարտքերի հետ կապված անցած տարվա 21 համայնքի փոխարեն այս տարի պարտքեր կունենան 17-ը: Որոշ համայնքներ չեն

կարողանում աշխատավարձների նախկին պարտքերը մարել պարտատերերի բացակայության պատճառով:

2010 թվականի աշնանային զորակոչի արդյունքների, 2011 թվականի գարնանային զորակոչի խնդիրների պարզաբանման , զինվորական հաշվառումից և զորակոչից խուսափած անձանց որոնողական աշխատանքների վիճակի մասին՝ ըստ համայնքների և զինկոմիսարիատների ՀՀ կառավարության 27.05. 2010թ. թիվ 657 որոշման պահանջների պարզաբանում տվեց Աշտարակի զինկոմիսարիատի առաջին բաժնի պետ պ-րն Ս. Մեջլումյանը:

2010թ. աշնանային զորակոչի գործընթացը կատարվել է օրինականության դաշտում, պլանը կատարվել է 100 %-ով :Բժշկական հանձնաժողովները աշխատում են,զինակոչիկների խմբերը՝ համալրվում:2010-2011 թթ. աշխատանքի ընթացքում ուսանողների տարկետումները տրվել են օրինական կարգով:2011թ. զորակոչի խնդիրների հետ կապված մարզի 12 համայնքների հետ աշխատանք դեռ չի տարվել:Համայնքների ղեկավարները ժամանակին չեն բերել բոլոր փաստաթղթերը:Մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 15-ը կազմվում են զորակոչիկների ցուցակները:Ցուցակներ չներկայացրած համայնքապետերը պետք է 5 օրվա ընթացքում բերեն դրանք լրացված, առանց բացթողումների:

Որոշ համայնքներում կան չկցագրված անձինք:Այդպիսի անձանց ցուցակները պետք է ճշտվեն և ներկայացվեն համապատասխան զինկոմիսարիատներ: Հետախուզման մեջ գտնվող անձանց նկատմամբ տարվում են որոնողական աշխատանքներ, կազմվել են քրեական գործեր :

Մարզում սանիտարական միամսյակ հայտարարելու և դրա հետ կապված կազմակերպչական հարցերի պարզաբանումը ներկայացրեց քաղաքաշինության վարչության պետ պ-րն Ա. Դավայանը:

Համայնքներում հայտարարվել է սանիտարական միամսյակ:Աշխատանքներում ընդգրկվելու են նաև դպրոցական կոլեկտիվները:Համայնքապետերը բոլոր ուժերը պետք է կենտրոնացնեն սանիտարական աշխատանքները ըստ պատշաճի կատարելու համար:

Աղբյուրների սանիտարական վիճակը բարելավելու նպատակով պետք է սկսել դրանց մաքրման գործընթացը:

3-6 տարեկան երեխաների բնակչության պետական ռեգիստրում հաշվառման գործընթացի մասին զեկուցեց ԿՄՍ վարչության պետ պ-րն Պ. Համբարձումյանը:Ոչ բոլոր համայնքներում է ավարտվել 3-6 տարեկան երեխաների հաշվառման գործընթացը:Բոլոր համայնքներում պետք է գործընթացն ավարտել առանց բացթողումների:

Որոշ համայնքներում արդեն ստեղծվել են սենյակներ ուսումնական զենք-զինամթերքի պահպանման համար:Այն դպրոցներում, որտեղ չկան նմանատիպ սենյակներ, պետք է այդ ուղղությամբ աշխատանք տարվի:

Այլ հարցեր և հայտարարություններ.

1. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավար պ-րն Հ. Գևորգյանը հանդես եկավ հայտարարությամբ՝ կապված ավագանիների որոշումների , համայնքների ղեկավարների հրամանների, այլ իրավական փաստաթղթերի ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցման մասին:

Դրանցից շատերը ձևակերպված են ոչ ճիշտ և ՀՀ օրենսդրությանն անհամապատասխան: Պետք է ավագանիների որոշումները, համայնքների ղեկավարների հրամանները, այլ իրավական փաստաթղթերը կազմվեն իրավական դաշտին համապատասխան :

2.ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ պ-րն Ս. Հովսեփյանը խոսեց խնամակալության և հոգեբարձության հարցերի շուրջը:

- Համայնքներում ավագանիների որոշումներով պետք է ստեղծվեն խնամակալության և հոգեբարձության խորհուրդներ:Այն համայնքներում, որտեղ դեռ ստեղծված չեն այդ խորհուրդները,պետք է ավարտել նշված գործընթացը:

-<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ> ՓԲԸ-ի հետ բնակիչների վարկային պայմանագրերի կնքման գործընթացը պասիվ է: Պետք է բնակիչների հետ աշխատանքներ տանել և ակտիվացնել համագործակցությունը բանկի հետ:

-Հասցեավորման հետ կապված որոշ համայնքներում խնդիրներ կան: Բոլոր համայնքներում պետք է այդ աշխատանքը արագ ավարտել և աջակցել զինկոմիսարիատներին վերոգրյալ հարցում:

ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Արագածոտնի մարզային կենտրոնի պետ Ա. Թորոսյանը խոսեց մարզի համայնքների խմելաջրի որակի մասին:

Համայնքապետերը պետք է հսկողություն իրականացնեն ջրի որակի մաքրության վերաբերյալ և ամիսը մեկ անգամ ստուգեն այն՝ համագործակցելով որևէ համապատասխան լաբորատորիայի հետ: Ստուգման արդյունքները պետք է տրամադրել սանէպիդկայանին՝ խմելաջրի սանիտարական վիճակը վերահսկելու համար: Մարզի որոշ համայնքներում ջրի աղտոտվածությունը հասնում է 67-80 %-ի:

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ՝

1. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավար պ-րն Հ. Գևորգյանին՝

-Տարածաշրջաններում կազմակերպել հանդիպումներ համայնքապետարանների աշխատակազմերի քարտուղարների և ՏԻ և ՀԳՄՀ վարչության հետ՝ ավագանու որոշումները, համայնքների ղեկավարների հրամանները, այլ իրավական փաստաթղթերը ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու վերաբերյալ::

2. Ֆ և ՍՏԶ վարչության պետ պ-րն Ն. Գալստյանին՝

-Կազմել ժամանակացույց և աշխատել ժամանակացույցին համաձայն այն համայնքապետերի հետ, ովքեր ունեն աշխատավարձների նախկին պարտքեր:Առաջնային կարգով գումարը ուղղել նախորդ տարիների աշխատավարձների նախկին պարտքերի մարմանը:

3. Քաղաքաշինության վարչության պետ Ա. Դավայանին՝

-Մարզի համայնքներում սանիտարական աշխատանքների կազմակերպումը վերահսկելու նպատակով մարզպետարանի աշխատակիցներին ամրացնել համապատասխան համայնքներին:

4.ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարկային տեսչության Արագածոտնի մարզային կենտրոնի պետ Ա. Թորոսյանին՝

-Պարբերաբար վերահսկել համայնքների կողմից խմելաջրի վարակազերծման աշխատանքների գործընթացը:

5. Մարզի բոլոր համայնքապետերին՝

-Ավարտել զորակոչի հետ կապված աշխատանքները և աջակցել համապատասխան զինկոմիսարիատներին:

-Մինչև սույն թվականի մայիսի 10-ը ավարտել սերմացուների ձեռք բերման աշխատանքները և պայմանագրերի կնքումը քաղաքացիների հետ:

-Պատշաճ մակարդակով կազմակերպել ոռոգումը համայնքներում:

- Կատարել ջրի վարակազերծման աշխատանքներ, հատկապես գարնանային հեղեղումների շրջանում:

-Համայնքներում պահպանել սեփական եկամուտների հավաքագրման անցած տարվա ցուցանիշների համեմատականը :

-Մայիսի 9-ի տոնակատարությունների հետ կապված յուրաքանչյուր համայնքում կազմակերպել միջոցառումներ, ցերեկույթներ և խրախուսում տալ Հայրենական պատերազմի մասնակիցներին , այդ թվում՝ դրամական :

- Համայնքներում սանիտարական աշխատանքները կազմակերպել պատշաճ ձևով:

Ս. Սահակյան